

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ներքին ուսումնասիրություն կազմակերպելու կարգ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում (այսուհետ՝ կրթահամալիր) ուսումնասիրությունները կազմակերպվում են.

- կրթահամալիրի տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) հրամանով.
 - կրթահամալիրի ուսումնական մասնաճյուղի ղեկավարի հրամանով:
- Կրթահամալիրում ներքին ուսումնասիրությունը չորս փուլ ունի:
- **Նախապատրաստական փուլ:** Այստեղ նշվում են, թե ինչ նպատակով է կազմակերպվում ուսումնասիրությունը, ինչ գործիքներ են կիրառվում, ովքեր են ուսումնասիրություն կատարողները, ինչ ժամկետներում:
 - **Ուսումնասիրության փուլ:** Այս փուլում նշված գործիքների կիրառմամբ կատարվում է բուն ուսումնասիրությունը:
 - **Անփոփման փուլ:** Ուսումնասիրությունից հետո խումբը գրավոր ներկայացնում է ուսումնասիրության արդյունքները (հաշվետվություն): Հաշվետվությունում նշվում են այն թերությունները, որոնք ենթակա են վերացման, թերությունը շտկողը և ժամկետը: Եթե հայտնաբերված թերությունը հնարավոր է եղել շտկել ուսումնասիրության ընթացքում, այդ մասին նույնպես արձանագրվում է: Հաշվետվությունում արձանագրված փաստի հետ համաձայն չլինելու դեպքում, համապատասխան անձը կարող է առանձին կարծիք ներկայացնել: Ուսումնասիրության հաշվետվությունը ներկայացվում է կրթահամալիրի մասնաժողովին կամ վարչական խորհրդին:
 - **Շտկման փուլ:** Ուսումնասիրության ընթացքում գրանցված թերությունները շտկվում են նշված ժամանակահատվածում, և այդ մասին գրավոր տեղեկացվում են մասնաժողովը կամ վարչական խորհուրդը: